ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2024/L-29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	հատուկ հանդերձանք — պարագաներ	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից և կեպիից: Գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 220□5 գրամ/մ2, բաղադրությունը՝ 65□2% բամբակ, 35□2% պոլիէսթեր: Գործվածքի տեսակը՝ <<TWILL>>, գույնը՝ մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն): Կտորի երանգը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Բաճկոնը՝ միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ սև գույնի երկկողմանի տրակտոր տեսակի երիզաշղթայով: Օձիքը՝

					5+/-0,5սմ լայնությամբ, ծալովի. Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնի առաջնամասի կողային հատվածներում ներկարված են մեկական թեք գրպաններ՝ շղթայով փակվող, իսկ կրծքավանդակի մասում 2 ծավալուն գրպաններ՝ կափույրներով: Կափույրները փակվում են դարձերեսին և գրպանների վերնամասում մշակված կպչուն ժապավեններով: Բաճկոնի աստառը սև կամ մուգ փիրուզագույն, մետաքսե գործվածքից: Կրծքամասի գրպանների լայնությունը՝ 14սմ, երկարությունը՝ 16սմ (շեղում +/-2սմ) տեղակայված են կենտրոնական ուղղահայաց կարից 5-6սմ հեռավորության վրա: Կրծքամասի ձախ գրպանի կափույրրի վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, կարվում են 12Х2.5սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեն: Ձախ գրպանի կափույրի վրա տեղադրվում է 12.5Х2.5 սմ չափով սև գույնի՝ վրան բեժ թելով ասեղնագործված «արյան կարգ» տարբերանշանը: Աջ թևքին՝ ուսագլխից 7 սմ ներքև, կարված է

					ՓԾ թևքի ասեղնագործված տարբերանշանը: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում մշակված են 2 կամրջակներ և 2 փակօղակներ: Բաճկոնի կողային ստորին հատվածներում և թևքերի վերջավորություններում գործվածքը մշակված է 5-6սմ լայնության ռետինե ժապավեններով: Բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում՝ օձիքի միացման կարից 13սմ հեռավորությամբ, սպիտակ թելով, 4X2.5X0.3սմ (բարձրություն X լայնություն X հաստություն) չափի տառատեսակով ասեղնագործված է «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Բաճկոնի վրայի բոլոր տարբերանշանները ամրացվում (կարվում) են տարբերանշանի վրա ասեղնագործված եզրակարերին համապատասխան գույներով /բեժ/: Տաբատը՝ ազատթող փողքերով, առաջնամասում 2 կողային ներկարված գրպաններով, հետևի աջ կողմում ներկարված 14X14սմ չափի մեկ գրպանով: Գուլֆիկը շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով:

					Գոտին մշակված է 6 կամրջակով և գոտու կողային հատվածներում չափը կարգավորող 2 ռեզինե ժապավեններով՝ 5+/-0.5սմ լայնությամբ: Գոտին ամրանում է կոճակով: Կեպին՝ աստառով, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են առնվազն 3մմ հաստության սոսնձային կտորից միջադիրով: Հովհարը միջադրված է առնվազն 3մմ հաստության պլաստիկ, ճկվող միջադիրով: Գլխարկահատակի կենտրոնում՝ ներսի կողմից, դրոշմվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում՝ 7+/-0,5սմ: Հետնամասում երկկողմանի մշակված է պլաստմասե չափսի կարգավորիչ: Գլխարկաբոլորքի կենտրոնում մշակված է խորհրդանշանը շրջանաձև /կտրամադրվի Պատվիրատուի կողմից/, 56+/-1մմ տրամագծով, սև կտորի վրա ասեղնագործված: Համազգեստի չափսերը

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2024/Լ-29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					
					կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից: Բաճկոնի և տաբատի ներսամասում մշակվում է խնամքի վերաբերյալ պիտակ՝ վրան նշված արտադրողի անվանումը, չափս-հասակը, խնամքի պայմանները: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, յուրաքանչյուր ապրանքատեսակը մեկ թափանցիկ պարկի մեջ: Պարկերի չափսերը պետք է համապատասխանեն ապրանքատեսակի չափսերին: Գլխարկներն առանձին արկղերում պետք է լինեն չդեֆորմացված՝ առանձին շարվածքով: Պատվիրատուի պահանջով մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային

					խտության, ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպությունից: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: